Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10989

Цена 20 к.

Դ. ԴՈԼԵՎ և Ֆ. ՍԻՍՈՑԵՎ

ՀԱՆԴԻՊԱԿԱՆԸ

ՊԻԽՍ 1 ԴՈՐԾՈՂՈՒԹ.

Փոխադրեց Գ. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

891.71
Դ-71

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
1932 ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

891.71
Դ-71
ար.

27 AUG 2006
19 NOV 2010

Դ. ԴՈԼԵՎ և Ֆ. ՍԻՍՈՅԵՎ

ՀԱՆԴԻՊԱԿԱՆԸ

ՊԻԵՍ 1. ԳՈՐԾՈՂՈՒԹ.

Փոխադրեց Գ. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

107

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՀՅՈՒՍԻՍ. ԿՈՎԿԱՍ" — 1932

03 APR 2013
10989

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Գեղեցիկ, 35—40 տարեկան, կոլտնտեսության նախագահուհի։
Լուկաս, 30 տարեկան, վարչության անդամ, ընչի քարտուղար։
Խաչերես, 35—40 տարեկան, վարչության անդամ, ողորմունիստ։
Դասպար, 40 տարեկան, կոլտնտեսության անդամ, յենթակուլակ։
Վարդերես աղա, 80—85 տարեկան ծեր. կոլտնտեսական։
Գոմնա նրա կինը 76 տար. ակտիվիստ։
Բրիգադիր, կոլտնտեսական, 22—25 տարեկան։

Գործողությունը կատարվում է մեր օրերում, Հայկական շրջանների կոլտնտեսություններից մեկում։

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Ք. Ալեքսանդրապոլ
Հ. ՍՍՀ-ԿԿՀ
Ա. Մասնիկյանի անվան

3287
41
95°2
44

ՀԱՆԴԻՊԱԿԱՆԸ

Պիես 1 գործ.

Կոլտնտեսության վարչության դրասենյակը։ Պատերին կախված են պլակատներ ցանքի կամպանիայի վերաբերյալ, դիագրամներ, առաջնորդների նկարներ։ Սեղանի վրա թղթեր, տետրեր և փոքրիկ տպագրակներով հացահատիկային կուլտուրաների նմուշներ։ Մեջտեղում՝ դուռ, աջ կողմում՝ պատուհան։

Բեմի վրա, սեղանի մոտ նստած է Գեղեցիկը և թղթերն է նայում, Վարդերես աղան նստած է անկյունում, Խաչերեսն ու Լուկասը նստած են նստարանի վրա, յերբեմն վեր են կենում տեղից։

ԳԵՂԵՑԻԿ. Ինչու մինչև հիմա ցանքի պլանը չեն ուղարկում ռայոնից։ Ուրիշ տեղերում վաղուց ստացել են։

ԽԱՉԵՐԵՍ. Չեղ մարդու տեղ չեն դնում, ընկեր Գեղեցիկ։ Վորոշակի հայտարարում եմ, վոր դուք, վորպես կին մարդ, կոլտնտեսության վարչության հեղինակությունը չեք կարող իր կոչման բարձրության վրա պահել։ Ցես վերջացրի։

ԼՈՒԿԱՇ. Լավ է բոլորովին չսկսեիր, Խաչերես։ Ընկեր Գեղեցիկը, վորպես կոլտնտեսության նախագահ, շատ լավ ել տանում է իր գործը, իսկ դու դիտես միայն լեզվիդ դռռ տալ։ Անընդհատ յես անցկացրել լեզուդ, ինչ է։

ԽԱՉԵՐԵՍ. Անկաղմակերպ վիրավորանքի համար կոնկրետ կերպով բողոքում եմ։ Դու իմ ինքնասիրությունը մի խեղդիր։ Ցես վերջացրի։ Իսկ իմ գործը կատարում եմ հեղինակավոր։

ԼՈՒԿԱՇ. Չլինի՞ սխալվում ես։ Այ, քեզ հանձնարարված է հսկել ինվենտարի նորոգմանը։ Իսկ յես մի քիչ առաջ անցնում եյի,—բրիչկաները ջարդված, այնպես ընկած են։

ԽԱՉԵՐԵՍ. Բրիչկան, դա հեչ, ավելորդ բան է։ Ինչ կարիք կա բրիչկաների մասին հոգալ, մեզ հիմա ավտոմոբիլներ են պետք։ Դե դարբնոցում էլ հին գործիքներ են։ Քանի անգամ ասել եմ ընկեր Գեղեցիկին, վոր պետք է մեխանիքական մուրճ ձեռք բերել, վորպեսզի կոլտնտեսության դարբինն ազատվի ձեռքով հարվածելուց։ Կամ վերցնենք քուրան։ Ժամանակն է արդեն համաձայն գիտության և տեխնիկայի փոխարինել դոմնայով։ Յես վերջացրի։

ՎԱՐԴԵՐԵՍ ԱՂԱ. Դոմնայո՞վ։ Քանն ասաց։ Դոմնա և քուրա։ Իմ Դոմնան 76 տարեկան է և՛ հազիվ է քայլնում։ Դրա համար կոլտնտեսություն չմտանք, վոր Դոմնան դարբնոցում աշխատի։ Մի սրան տեսեք, է՜։

ԳԵՂԵՑԻԿ. Վարդերես աղա, պապի։ Դու չհասկացար։ Խաչերեսի ասածը խո քու Դոմնայի մասին չէր։ Եդ տեսակ մեծ-մեծ վառարաններ կան։

ՎԱՐԴԵՐԵՍ ԱՂԱ. Դե յես էլ կարծեցի, պառավիս մասին է խոսքը։

ԼՈՒԿԱՇ. Ե՜, Խաչերես, Խաչերես... խոսքով, լեզվով համաշխարհային մասշտաբով ես, իսկ գործնականում՝ քամի... և դու կուսակցության թեկածու յես։

ԽԱՉԵՐԵՍ. Հա, մոռացել եյի ձեզ հայտնել, քաղաքացի Լուկաշ։ Լավ կլիներ ուրիշների պակասները նկատեյիք։ Թե չէ կանացի յուբկան ծածկել է սաղ աշխարհն ու բան չես տեսնում։

ԳԵՂԵՑԻԿ. Բավական է։ Ամո՜թ է, վերջապես այդպիսի հիմարությունները լսել։ Բանը գործում, աշխատանքում է, և վոչ թե յուբկայում։ Քիչ շալվարավորներ կան, վորոնց

խելքը հեչ բանի չի հասնում... Լուկաշ, ինչպե՞ս է գնում սերմացույի զտումը։ Տրիյերները խո աշխատում են։

ԼՈՒԿԱՇ. Վոչինչ, աշխատում են։ Ժամանակին կվերջացնենք։ Այ, յերկրորդ բրիգադի բրիգադիրն էլ յեկավ։

(Ներս է մտնում բրիգադիրը)

ԲՐԻԳԱԴԻՐ. Հա նա ինքն է (սրբում է քրտինքը)։ Ո՜ւֆ, ինչպե՜ս հոգնեցի։ Մենք, ընկեր Գեղեցիկ, յերկրորդ բրիգադի հետ ենպիսի մրցման ենք մտել, վոր բուղ է բարձրանում։ Յերկրորդը հալից է դուրս գալիս—բայց ե՜ե՜ե՜... նա ո՞վ է, վոր մեզ հասնի։ Թիվանը մի նստելով մի մեծ աման փլավ ուտելուց հետ ենենց եր աշխատում, վոր հազիվ եյին հացահատիկ (սերմացու) հասցնում։ Ուղղակի մասոր է, մասոր։

ԳԵՂԵՑԻԿ. Լավ, հերիք գովես։ Դեռ մի նայեք, թե ինչպես է զտել։

ԲՐԻԳԱԴԻՐ. Համեցեք, ստուգեք։ Յես հետս նըմուշն էլ եմ բերել։ Առ, դատիր, արդարադատ դատավոր (գրպանից թափում է սեղանի վրա մի բուռ հացահատիկ։ Բոլորը նստում են։ Վարդերեսը փորձում է ատամի տակ)։

ՎԱՐԴԵՐԵՍ. Վոչինչ, հարմար ցորեն է։ Միայն թե յես իմը կասեմ, իզուր է ես բոլորը։ Մեր պապերն ու պապի պապերը սերմացուն չեյին զտում, բայց ստացվում եր...

ԼՈՒԿԱՇ. (վերջացնելով). Մոլախոտ։

ՎԱՐԴԵՐԵՍ (մտածելուց հետո). Հա, ղորթ ես ասում։ Մոլախոտ շատ եր լինում։

ԳԵՂԵՑԻԿ. Այո, լավ է զտված։ Գնանք, Լուկաշ, տեսնենք շատ է մնացել։

ԲՐԻԳԱԴԻՐ. Վերջանալու վրա յե։

(Գեղեցիկը, Լուկաշը և բրիգադիրը դուրս են գնում)։

ԽԱՉԵՐԵՍ (նրանց յետեվից ճենճգարար). Զայթաքեք։ Յես վերջացրի։

ՎԱՐԴԵՐԵՍ. Է՜հ, էհ, էհ... խենց էլ անհանգիստ մարդիկ։ Է՜, է, յերանելի որեր։ Մեր պապերը ձմեռ ժամանակ քուրսու տակից չեյին հեռանում։ Հիմա ցուրտ ձմրանից սկսում են գարնանացանի մասին մտածել։ Արմանք-զարմանքի խալխ։

ԽԱՉԵՐԵՍ. Ճիշտ ես դատում, պապի։ Ձմեռը հանգստանալ, տաքանալ է պետք քուրսու մոտ։ Գարունը վոր գա, են ժամանակ գործի անցիր։ Յես մի բերան ասում եմ, բոռում եմ, մեր եք շտապում։ Ինչի՞դ է պետք եդպես վազելը։ Տեմպերն ուժերից վեր են»։ Ես ճիշտ եմ ասում, պապի։

ՎԱՐԴԵՐԵՍ ԱՂԱ. Յես շատ եմ խմանում։ Գեղեցիկը— բերանն է ասում, դու քոնը։ Իսկ յես էլ իմը կասեմ՝ ամեն աշխատանք իր ժամանակն ունի։ Յերբ այծն իր միրուքը քամու հակառակ կողմն է թափ տալիս, նշանակում է—վարելու վախտն է։ Յերբ կատուն ձախ թաթիկով աչքն է տրորում—հենց ցանելու վախտ է։ Յերբ սև աքլորը ութանգամ բարձր ձենով կանչի—պատրաստվիր խոտհարքին։ Ես բոլորը մեր պապերի պապերն են փորձած ու...

(Ներս է գալիս Գասպարը, զգուշությամբ շուրջն է դիտում)

ԳԱՍՊԱՐ. Ընկեր Խաչերեսին հարգանքներս։ Ա՜, պապըն էլ այստեղ է։ Բարև, հին սերունդ (բարեվելու ձեռք է մեկնում)։

ԽԱՉԵՐԵՍ (կամաց Գասպարին). Հ՞ը, ի՞նչ թազա խաբար։

ԳԱՍՊԱՐ. Համբերիր, կասեմ (Պապին)։ Վարդերես ապա, քեզ պառավդ եր կանչում։ Ո՞ւր է, ասում է կորել մեր քավթառը։ Չլինի՞, ասում է, գնացել է հարվածային գրվի։

ՎԱՐԴԵՐԵՍ. Չէ՞... դե պետք է գնալ, թե չէ պառավը ջահլես կտանի։ Մի բան վոր պատահում է, էլ սկսում է տակն ու վրա անել, քննադատել։ Անցյալներում, տեսնեմ պատի թերթերումն է խայտառակել։ Յես ու իմ աստված։ Ինչու, վոր կոմսոմոլների հասցեյին մի քիչ խոսացի։ Դե, գնացի, գնացի (դուրս է գնում)։

ԳԱՍՊԱՐ. Եկի աշխատանքի լծեցին։ Խոսեցի մեր մի քանի ծերերի հետ։ Շատերը դժգոհ են, զանգատվում են դրությունից։ Ե՜հ, ընկեր Խաչերես, Գեղեցիկի տեղ դու պիտի լինեյիր կոլտնտեսության նախագահը։ Ամեն ինչ ուրիշ կերպ կերթար։ Կնգավարի չեր լինի։

ԽԱՉԵՐԵՍ (հոգոց քաշելով). Ինչ արած։ Շատ էլ կուզեյի ողնել ժողովրդին կոնկրետ ինիցիատիվով, միայն թե անհասկացողություն յերևան յեկավ՝ Գեղեցիկը շատ ձայն ստացավ։ Դե վոչինչ. Նա յերկար չի մնա։ Յես վերջացրի։

ԳԱՍՊԱՐ. Ճշմարիտ է։ Յեթե ցանքի պլանն անհաջող անցնի, նրան անպայման կհեռացնեն նախագահությունից։ Միայն թե յես վախենում եմ, չլինի հանկարծ մերոնք իրենց կարծիքը փոխեն։

ԽԱՉԵՐԵՍ (յերկյուղածությամբ). Հ՞ը, ինչ կա։

ԳԱՍՊԱՐ. Ախր Գեղեցիկն ուզում է կոլտնտեսությունում գործավարձի սիստեմը մտցնել։ Եդ դեպքում խո սաղ տարին էլ կաշխատեն։

ԽԱՉԵՐԵՍ. Վարչության նիստին յես հեղինակավոր կերպով նրա դեմ խոսեցի։ Հետագայում էլ կոնկրետ կերպով պիտի պաշտպանեմ իմ յելակետը։ Ընդհանրապես, ինչ վոր ձեռքիցս գա պիտի անեմ, վորպեսզի աշխատելուն դու չտան։ Շտապելու կարիք չկա։ Յես վերջացրի։

ԳԱՍՊԱՐ. Վորպես հարազատ հայր, մեր միակ հույսը դու յես։

ԽԱՉԵՐԵՍ. Ինչ հաշիվ կա այժմ աշխատանքին գոտալ մեր ես կոշտ ձեռքերով, յերբ ամենաշատը մի տասը տարուց հետո մեր փոխարեն մեքենաները ամբողջովին և պիտի վարեն և պիտի ցանեն։ Իսկ մենք բերաններս բացած հեղինակավոր կերպով պրյանիկներ պիտի կուլ տանք։ Յես վերջացրի։

ԳԱՍՊԱՐ. Է՜, էհ, ինչ անուշ ես խոսում։ Վոր չեմ լը-

սում—կարծես մեղր եմ խմում։ Յեվ քեզ պես անհաման մարդուն ոպորտունիստ են ասում, հը…

ԽԱԶԵՐԵՍ. Եղ յե՞ս եմ ոպորտունիստը։ Յես վոր կամ— ամբողջովին կոլեկտիվացման, մեքենայացման կողմնակից եմ, միայն թե… ինչո՞ւ շտապել։ Կա մի շատ ուղիղ լոզունգ՝ „тише едешь, дальше будешь“.

(Պատուհանին են ծեծում)

ՁԱՅՆԵՐ ԲԵՄԻ ՅԵՏԵՎԻՑ. Ո՞վ կա եղանը, փոստը ստացեք։

ԽԱԶԵՐԵՍ. Ես սհաթին (դուրս ե գնում յեվ վերադառնում լրագրերով): Սպասիր, կարծես թե ռայկոլխոզսոյուզից ե, ճիշտ վոր այսպես էլ ե։

ԳԱՍՊԱՐ (տոնը ցածրացնելով յեվ նայացքն ուղղելով դեպի պատուհանը). Գուցե ելի գարնանացանի մասին ե։ Բաց արա։ Դու, վորպես վարչության անդամ, խո իրավունք ունես։

ԽԱԶԵՐԵՍ. Պարզ ե, բաց կանեմ։ Լիովին իրավունք ունեմ, վորպես առաջնորդ կոլտնտեսության մաշտաբով (պատռում ե ծրարը յեվ կարդում): «Ի պատասխան ձեր հարցումին հայտնում ենք, վոր ցանքային պլանը ձեր կոլտնտեսության համար հսկիչ թվերով ուղարկված ե մի ամիս առաջ։ Սրանով ուղարկում ենք նաև պատճենը։ Սույն գրությունը ստանալուն պես խնդրվում ե տեղեկացնել մեզ և հայտնել պլանի իրագործման նախապատրաստական աշխատանքների մասին։

(Պաուզա)

ԳԱՍՊԱՐ. Ելի, ելի ուղարկել են։ Թվերը նո՞ւյնն են, թե…

ԽԱԶԵՐԵՍ. Նույնն ե։ Ցանքսը անցյալ տարվանից 25 տոկոսով ե ավելանում։ Տեխնիկական բույսերը նույնպես ավելանում են։ Ի՞նչ միտք կա մեկեն եսպես լայնացնել։ Ձե, դա անհնարին բան ե։

ԳԱՍՊԱՐ. Իսկ դուք, ընկեր Խաչերես, մի թույլ տաք։ Փրկեցեք կոլտնտեսությունը կործանարար տեմպերից։

ԽԱԶԵՐԵՍ. Ինչպես անել, յերբ մասսան կտրված ե ինձնից։

ԳԱՍՊԱՐ. Իսկ դուք, ընկեր Խաչերես, թաքցրեք այդ գրությունը։ Ռայկոլխոզմիությանը կարելի յե գրել՝ այսպես ու այսպես, ձեր պատվական նամակը ստացանք, վորու մեջ դուք յերկրորդ անգամ գրում եք ցանքսի պլանի մասին, մենք չենք ստացել, դրա համար ել…

ԽԱԶԵՐԵՍ. Սպասիր, սպասիր… վո՞նց թե՝ «ձեր պատվական նամակը չենք ստացել», իսկ պատասխանում ենք։ Իրար հեչ չի բռնում։

ԳԱՍՊԱՐ. Ղորթ վոր, անկապ բան դուրս եկավ։

ԽԱԶԵՐԵՍ. Ռայկոլխոզմիության առաջին նամակը իսկապես յես եյի վերցրել ուսումնասիրելու համար, բայց քանի վոր հարցը շատ լուրջ հարց եր, դրա համար ել յես չեյի շտապում։ Յես շտապողականություն չեմ ընդունում։ Ահա վրա հասավ և յերկրորդը։ Ի՞նչ անենք հիմա։

ԳԱՍՊԱՐ. Ահավասիկ, այսպես (վերցնում ե թուղթը, ուզում ե պատռել)։

ԽԱԶԵՐԵՍ (բռնելով նրա ձեռքից)։ Հեղինակավոր կերպով արգելում եմ։ Թուղթը պետք ե հարգել։ Յեթե յես կոլտնտեսության կամ գյուղխորհրդի նախագահը լինեյի, ամբողջ գործը թղթի վրա կկառուցեյի։ Ընդհանրապես հրահանգներ բաց կթողնեյի, վոր բոլորը դողային։ Իմ գրած թղթերը սաղ ռայոնում բերնե բերան կանցնեյին։ Որական հարյուրավոր թղթեր…

ԳԱՍՊԱՐ (անհամբեր ընդհատում ե)։ Հա, ճիշտ եք ասում, ընկեր Խաչերես, իսկ վոր ես թուղթը պակաս լինի, ինչ վնաս։ Ի՞նչ հաշիվ ունենք մի ինչ վոր կնոջ ու անփոխան հարվածայինների դուռնայով պար գալ, նրանց ասա-

ծով գործել ու նրանց համար փառք ու պատիվ ձեռք բերել։ Ի՞նչ են նրանք յերկուսիս էլ խայտառակել։ Ինձ յենթակուլակ, մորթապաշտ, իսկ քեզ յերկուերեսանի յեն անվանում։

ԽԱՉԵՐԵՍ. Ո՞վ է նրանց ասածներից վիրավորվում, թող հաչեն` վորքան քեֆերն է գալիս։ Յես վերջացրի։

ԳԱՍՊԱՐ. Դե վոր եդպես է, յես էլ առաջարկում եմ ես գրությունը վոչնչացնել (ուզում է պատռել, եդ մոմենտին դուռն է բացվում)։

(Ներս է գալիս Վարդերեսը)

ՎԱՐԴԵՐԵՍ. Լսիր, Գասպար...

ԳԱՍՊԱՐ (շտապ կերպով ուզում է պահել թուղթը, վոր ընկնում է հատակին, զգուշորեն նստում է թղթի վրա, վորպեսզի թաքցնի. շփոթված)։ Ա՞, ի՞նչ։ Ի՞նչ ես ասում, պապի։

ՎԱՐԴԵՐԵՍ. Եդ ինչո՞ւ հանկարծ տափը փոխեցիր, Գասպար։

ԳԱՍՊԱՐ. Յես ենպես... հա, խո գի՞տես, պապի, վոսկրացավ ունեմ ու հանկարծ վոտքս ցավեց... Ուզում եմ սապոգներս հանեմ։

ՎԱՐԴԵՐԵՍ (կասկածանքով)։ Հը՜մ... Չեմ լսել, վոր վոսկրացավ ունես... Միայն թե ենպես եմ միտք անում, վոր ներս գալուս խանգարեցի քեզ։ Հը՞, Գասպար։

ԳԱՍՊԱՐ. Ինչե՞ր ես ասում, ինչե՞ր ես ասում, պապի։ Ինչո՞ւ, ինչո՞վ ես դու ինձ խանգարում։

ՎԱՐԴԵՐԵՍ. Դե, լավ։ Դոմնան էլ տանը չեր։ Նա, յերևի, ինձ է ման գալիս, իսկ յես—նրան։ Ենպես էլ թարս բան։ Հա, խո եստեղ չի՞ յեկել։

ԳԱՍՊԱՐ (շտապ). Ինչպես չէ, յեկավ, յեկավ։ Քիչ առաջ այստեղ եր։ Աղբրի կողմը գնաց։ Վազիր, կարող է, հասնես։

ՎԱՐԴԵՐԵՍ. Ինչ կա վոր, կվազեմ էլ... Հե՜, հե՜, հե՜... Յես խո վոսկրացավ չունեմ... (ծիծաղելով դուրս է գնում)։

ԳԱՍՊԱՐ. Թյո՜ւհ, սատանան տանի։ Արյուն քրտինք մտա։ Վոր նկատեր քավթառը, թե ուզում եմ թուղթը պատռել, նախագահ Գեղեցիկին կասեր ու...

ԽԱՉԵՐԵՍ. Ասում եմ—պետք չե վոչնչացնել։ Ի հարկե, յես կոնկրետ կերպով հայտարարում եմ (մեծ քայլերով յետ ու առաջ է գնում)։ Գարնանացանի այդ ստուգիչ թվերը մեր ուժից վեր են... տեմպերը նույնպես բարձր...

ԳԱՍՊԱՐ (փոքր քայլերով վազելով նրա յետևից)։ Հա, Խաչերես ջան, ուժից վեր են, վեր.

ԽԱՉԵՐԵՍ (վոգեվորված)։ Յես միանգամայն կոլեկտիվացման կողմնակից եմ, բայց ցանքսի լայնացմանը պետք է շատ զգույշ մոտենալ։

ԳԱՍՊԱՐ (վազելով յետևից)։ Հա, Խաչերես ջան, իհարկե, իհարկե զգույշ։

ԽԱՉԵՐԵՍ. Յես լիովին ընդունում եմ հնգամյակը, միայն թե վոչ մեր կոլտնտեսությունում, մեր կոլտնտեսականներին պետք է հանգիստ տալ անհատական տնտեսության ծանր աշխատանքից հետո. յես վերջացրի։ (Կանգ է առնում)։

ԳԱՍՊԱՐ (արագ վազելուց կպչում է մեջքին)։ Վերջացրիր, Խաչերես ջան, վերջացրիր։ (Պաուզա)։ Բաս թո՞ւղթը ի՞նչ անենք ես...

ԽԱՉԵՐԵՍ (մտածելուց հետո). Վորովհետև յես միանգամայն հակառակ եմ ստուգիչ թվերին, հեղինակավոր կերպով հայտարարում եմ, վոր թվերը պետք է փոխել։

ԳԱՍՊԱՐ. Դու խո չես կարող վարչության բոլոր անդամներին համոզել։ Իսկ յեթե այդ կինը հաղթանակեց, էլ մենք քեզ նախագահ չենք տեսնի, վոնց վոր մեր ականջները։ (Հոգոց է քաշում)։

ԽԱՉԵՐԵՍ. Յես վերջացրի։

ԳԱՍՊԱՐ. Լավ կանես—սկսես։ Կարող ես դու ինքդ փոփոխություն մտցնել թղթի մեջ։ Գլուխդ իսկական խելքի տուպրակ է։ Ինքդ խո լավ գիտես, թե ինչն է ոգտակար։ Ենպես էլ արա։ Թվանշանը ուղղիր, վոչ վոք չիմանա—և մեր։ ասածը կլինի։

ԽԱՉԵՐԵՍ. Հեղինակավոր կերպով համաձայն չեմ։ Եդ տեսակ գործի համար յես ինձ վրա պատասխանատվություն չեմ վերցնի։ Յես վերջացրի։

ԳԱՍՊԱՐ (մտածելուց հետո)։ Լավ, եդ դեպքում, ընկեր Խաչերես, այսպես՝ իբր թե դուք վոչնչից խաբար չեք և կոլխոզմիությունից ստացված թուղթն էլ չեք տեսել։ Համաձա՞յն եք։

ԽԱՉԵՐԵՍ. Միանգամայն համաձայն եմ չխառնվել։ Իսկ այժմ հեղինակավոր կերպով գնամ տեսնեմ, թե ինչ է անում Դեղեցիկը տրիյերի մոտ։ Յես վերջացրի (դուրս է գնում)։

ԳԱՍՊԱՐ (մենակ)։ Սատանա, վախկոտ, կարծես նա, պատակի սիրտ ունի։ Ե՜ե՜, առանց նրանց էլ յոլա կտանեմ։ (Նստում է սեղանի մոտ)։ Ը՜հ՜ը, թվանշանը ենպես կուղղենք-վոր վոչ վոք վոչինչ չի կասկածի։ (Կարդում է)։ Հացահատիկային կուլտուրաներ ցանել 750 գա»։ Ահա՜։ Մենք ես յոթից յերկուս կդարձնենք։ Այդպես։ Եսաեղ էլ կուղղենք։ Եսաեղ էլ ամեն ինչ պատրաստ է։ Ափսոս, մի քիչ ծրարը տրորվեց։ Դե, վոչինչ (թուղթը դնում է ծրարի մեջ, հարթում է ձեռքով յեվ ձեփում)։ Հե՜, հե՜, հե՜, վոչ վոք չի կասկածի, վոր պլանը վոքբացված է։ Իսկ յերբ կպարզվի—փոփոխելը արդեն ուշ կլինի։ Վայ կդա նախագահի գլխին...

(Ներս է գալիս Խաչերեսը)։

ԽԱՉԵՐԵՍ. Դեղեցիկը շուտով այստեղ կլինի։ Դարձյալ նրա հետ մինչև հաղթական վերջը հանուն լայն մասսաների շահերի ոգտին վեճի յեմ բռնվելու։

ԳԱՍՊԱՐ. Վոր լայների համար ես աշխատում, ընկեր Խաչերես, դե մեր Մանուկ աղայի համար ես մի խոսք ասա։ Նա յել լայն, շատ լայն մարդ է, հաղիվ յերկուսով նրան գրկենք...

ԽԱՉԵՐԵՍ. Յեվ նա դեռ կուլա՞կ է։

ԳԱՍՊԱՐ. Ուր վոր է հախիցը կգան Յեվ ի՞նչ են ուզում մարդուց։ Նա կոլտնտեսություն մտնելուն նույնիսկ համաձայն է։ Խո գիտես, թե նա ինչպիսի տնտեսություն ուներ։ Մի՞թե նա կոլտնտեսությունում անպետք կլիներ։ Մեծ խելքի տեր մարդ, մի ձեռքով սայլ է բարձրացնում։ Բայց դժբախտաբար, ընկեր Խաչերես, բոլորը քեզ պես չեն վերաբերվում։ Միակ հույսը դու յես։

ԽԱՉԵՐԵՍ. Հեղինակավոր կերպով հայտարարում եմ. յես նրան անմիջապես կոլտնտեսությունում էլ կընդունեյի ու սոցիալիստ կդարձնեյի։ Յես վերջացրի։

(Ներս են գալիս Դեղեցիկը և Լուկաշը)։

ԴԵՂԵՑԻԿ. Կեցցե յերրորդ բրիգադը։ Ինչ դոչաղ տղերք են։

ԼՈՒԿԱՇ. Ըստ յերևույթին առաջին մրցանակը նրանք կստանան։ Թեև յերկրորդը աշխատում է նրանից առաջ անցնել։

ԳԱՍՊԱՐ. Կոլտնտեսային հարգանքներս, ընկեր Դեղեցիկ։

ԴԵՂԵՑԻԿ. Բարև, Գասպար։ Ինչո՞ւ միշտ գործից բացակայում ես։ Տարիքով մարդ, դու ջահելներին որինակ պիտի ցույց տաս, իսկ դուրս է գալիս ընդհակառակը։

ԳԱՍՊԱՐ. Մենք հեչ կարող չենք չափվել ջահելների հետ։ Դե սեկ էլ վոր մարդուս որգանիզմը հանդիստ է պահանջում, մանավանդ ձմեռ ժամանակ։ Իսկ դուք, ընկեր Դեղեցիկ, ուրախ եք բոլոր մարդկանց ուղտի պես գործի լծել։

ԼՈՒԿԱՇ. Իսկ դու կարծում եյիր, վոր քուրսու տակ

վառքիրը տաքացնելով ու անվերջ չիբուխ քաշելո՞վ պիտի կառուցենք նոր կյանքը: Հիմա ժամանակը մարտական է: Տարին ամիս ենք դարձնում:

ԳԵՂԵՑԻԿ (Ստացված նամակներն է նայում): Լուկաշ, պլանն ստացվել է, վերջապես (կարդում է): Ա՜յ քեզ բան: Գրում են, որ դեռ մի ամիս առաջ են ուղարկել մեր ցանքսի պլանը:

ԼՈՒԿԱՇ. Ա՜յ քեզ բան: Իսկ մենք չենք ստացել: Հապա եկ վո՞նց պատահեց որ:

ԳԱՍՊԱՐ. Պարզ է, փոշտի անկանոնությունը: Ենքա՜ն նամակներ է կորչում, ենքա՜ն, որ գյուղաթղթակիցն յերեւակայել անգամ չի կարող: Դե, յես գնացի: Մնացեք բարով (դուրս է գնում):

ԽԱՉԵՐԵՍ. Իսկ ուրի՞շ... ինչ են գրում պլանում:

ԳԵՂԵՑԻԿ. Ինչ որ տարօրինակ բան: Առաջարկում են ցանքսի պլանը միայն հինգ տոկոսով ավելացնել: Իմ կարծիքով քիչ է:

ԽԱՉԵՐԵՍ. Փաստորեն յես ձեզ հետ համաձայն չեմ, ընկեր Գեղեցիկ: Ռայկոլխոզմիությունը, ըստ յերևույթին, ինձ հետ համամիտ է: Յես վերջացրի:

ԼՈՒԿԱՇ. Քեզ հետ վիճելը անօգուտ է: Ընկեր Գեղեցիկ, վորովհետև գործը ստիպողական է և շատ կարևոր գործ է, չձգձգել հարցը և այսօր և յեթ ցանքսի պլանը քըննելու համար կոլտնտեսականների արտակարգ ժողով հրավիրել:

ԳԵՂԵՑԻԿ. Վոչ թե այսօր, այլ իսկույն, այս րոպեյին: Հենց վոր գործը վերջացրին, թող այստեղ գան: Լուկաշ, արա վոր հայտարարեն:

ԼՈՒԿԱՇ. Յես անմիջապես (դուրս է գնում):

ԽԱՉԵՐԵՍ. Ինչացո՞ւ յե եդպիսի շտապողականությունը: Յես վերջացրի:

(Թեանցուկ ներս են գալիս Վարդերեսն ու կինը):

ԱԳԱԹ. Բարև, ընկերներին:

ԳԵՂԵՑԻԿ (ժպտալով): Ա՜, մեր ջահելները յեկան:

ԱԳԱԹ. Հա, յեկանք, ջանիկս, յեկանք: Բացատրություն է պահանջվում (դիմում է Խաչերեսին): Ինչո՞ւ, տասը տեսնեմ, դու իմ արծիվին պարապ տեղը սաղ գեղը պըտըտեցրիր, հա՞:

ԽԱՉԵՐԵՍ. Ո՞վ: Յե՞ս... Փաստորեն այդպիսի բան չի յեղել:

ԱԳԱԹ. Դու թե քու որթալ Գասպարը, մեկ է: Եդ ինչո՞ւ յեք ասել իմ Վարդերես աղային, որ յես նրան ապբրի ժամ եմ սպասում: Ծաղրե՞լ եք ուզում մեզ, պառավներիս, հա՞:

ՎԱՐԴԵՐԵՍ (Գեղեցիկին): Այ, թե ինչ պատմություն դուրս յեկավ, ընկեր Գեղեցիկ...

ԽԱՉԵՐԵՍ (անհանգստացած): Դե, գե, բավական է, Վարդերես աղա. մի խանգարիր, տեսնո՞ւմ ես զբաղված է ընկեր Գեղեցիկը:

ՎԱՐԴԵՐԵՍ. Յես, վոչինչ... Ուզում եմ պատմել թե, ուրեմն, ներս եմ մտնում, նայում եմ ու...

ԽԱՉԵՐԵՍ. (Աշխատելով նրա ուշադրությունը գրավել). Վարդերես աղա, գիտե՞ս, յեպոյում աղ կա՞:

ՎԱՐԴԵՐԵՍ. Հա, կա, նոր բերին: Հա, են եյի ասում ներս եմ մտնում ու տեսնեմ...

ԽԱՉԵՐԵՍ. Գամ է՞լ կա... թե...

ՎԱՐԴԵՐԵՍ. (Նեղացած). Գամ էլ կա, աղ էլ կա, ու ամեն ինչ կա, համա միայն թե դու մեր գահլեն տարար: Ուրեմն, ասում եմ, ներս եմ մտնում ու ինչ տեսնեմ, մեր կարմիր կովն է ծնել ու ենենց մի սիրուն հորթ է բերել...

ԽԱՉԵՐԵՍ. (Հանգստացած, ճոգոց է քաշում). Փո՜ւ, իսկ յես կարծում եյի..,

(Ներս է գալիս Լուկաշը)

ԼՈՒԿԱՇ. Հայտնեցի. (Ցույց տալով հանդիսականների առաջին). Տեսնում ես, արդեն հավաքված են։

ԳԵՂԵՑԻԿ. Շատ լավ. իսկույն և յետ կսկսենք. Հապա օգնիր սեղանը մոտեցնենք։ (Սեղանը մեջտեղ են դնում)։ Ո՞ւր է զանգակը. Ա, այստեղ է։

ԽԱՉԵՐԵՍ. Առաջարկում եմ մի գրաֆին ջուր բերել. Յես վերջացրի։

(Ներս են գալիս՝ Գասպարը, բրիգադիրը, մի քանի տղամարդիկ և կանայք—կոլխոզնիկներ)։

ԳԱՍՊԱՐ. Ես ինչքա՞ն խալխին հանգիստ չեն թողնում։ Գործից դեռ շունչ չենք քաշել, արդեն ժողովի յեն քշում։

ԲՐԻԳԱԴԻՐ. Դե լավ, դոնե դու լեզուդ կարճ ունեցիր։ Դու ես որ ենքան էլ չես բեզարել. Լոդըրությունն եյիր անում։ Չնայած վոր մենք աշխատել ենք, բայց էլի ժողովով հետաքրքրվում ենք։

ՋԱՅՆԵՐ. Ճշմարիտ է... Պետք է խոսել..։ Յերևի շատ հարցեր կան... Ցանքսը առանց խորհրդակցության անկարելի յե... Ինչ խորհրդակցել... Խորհրդակցելս վո՞րն է...

(Աղմուկ, աղաղակ)

ԳԵՂԵՑԻԿ. Ընկերներ, վիճաբանությունը հետո կանցնենք, յեթե ի հարկե կարիք լինի, իսկ այժմ—գրավեցեք տեղերդ. ժողովը բաց եմ անում։ (Բոլորը գնում, նստում են առաջում)։

ԳԵՂԵՑԻԿ. (գրավում է նախագահության տեղը). Ընկեր կոլտնտեսականներ, ժողովը հայտարարում եմ բացված. Ավելացում չկա՞։

ՋԱՅՆԵՐ. Էլ ի՞նչ ավելացում. հարցը մեծ է. հարցը լուրջ է։

ԳԵՂԵՑԻԿ. Վերջակետ. ուրեմն, օրակարգը ընդունված է. խոսքը տրվում է բջիջի քարտուղար ընկեր Լուկաշին։

(Ծափահարություններ)

ԼՈՒԿԱՇ. Ընկերնե՛ր, մենք ավարտեցինք հնգամյակի յերրորդ, վճռական տարին և թևակոխեցինք չորրորդ և վերջնական տարին։ Գյուղատնտեսության ասպարեզում այս ավարտական տարում մենք պետք է գերակատարենք պլանը։

1930 թվականին կոլտնտեսությունները ցանել են արդեն 43 միլիոնից ավելի հեկտար, այն ինչ հնգամյա պլանի վերջում նախատեսնված էր կոլտնտեսությունների գծով ցանել միայն քսան միլիոն հեկտար։ 1931 թվին հացահատիկային հիմնական ռայոնների բոլոր գյուղացիական տնտեսությունների 80 տոկոսը յեղել են կոլտնտեսություններում, իսկ մնացած, մյուս ռայոններում—վոչ պակաս 50 տոկոսից։ Ըստ այս տարվա գարնանացանքսի պլանի, ընդամենը ցանվելու յե 143 միլիոն հեկտար։ Ահա թե ինչպիսի աճում ունենք մենք։ Կուսակցության մեզ տված առաջադրությունը մենք վոչ թե միայն պետք է կատարենք, այլ և գերակատարենք։ Մենք մեր կոլտնտեսությունում յերրորդ բոլշևիկյան ցանքսը պետք է անցկացնենք վորքան կարելի յե լավ։ Հարվածայնությամբ, սոցմրցմամբ և աշխատանքի ուղիղ դասավորումով պետք է բարձրացնենք աշխատանքի դիսցիպլինան և ցանքսը ավարտել ժամկետից առաջ (քաշվում է մի կողմ)։

(Ծափահարություններ)

ԽԱՉԵՐԵՍ. Շատ վաղն ես. Тише едешь... Յես վերջացրի։

(Ծիծաղ, սուլոց, աղմուկ)

ԳԵՂԵՑԻԿ. (Զանգահարելով). Ընկերներ, մեր կոլտնտեսության էլ առաջադրությունն է տրված։ Ռայկոլխոզմիությունից մենք ստացանք ցանքսի պլանը։ Մեզ առաջարկում են ցանքսի պլանը լայնացնել միայն հինգ տոկոսով։ Առաջարկում եմ արտահայտվել։

ԽԱՉԵՐԵՍ. Կոնկրետ խոսք եմ խնդրում։ Յես վերջացրի։

(Ծիծաղ)

ԳԵՂԵՑԻԿ. Խոսիր, ընկեր Խաչերես, միայն թե կարճ։

ԽԱՉԵՐԵՍ. Ընկերներ, ընդհանրապես և առհասարակ ես վորոշակի և փաստորեն հայտարարում եմ, վոր ցանքսի տարածության լայնացումը պետք է վողջունել... միայն թե վոչ մեր կոլտնտեսությունում. (աղմուկ): Մեր կոլտնտեսության ցանքսի պլանը մեծացնելուց գլուխ չենք հանի: Ես բարձր տեմպերին միանգամայն կողմնակից եմ... բայց, ինչու՞ շտապել: Մեր կոլտնտեսությունը չի կարող...

ԶԱՅՆԵՐ. Ինչպե՞ս թե չի կարող... ինչ ես դուրս տալիս պակաս ու ավելի:

ԽԱՉԵՐԵՍ. Դե, յես հինգ տոկոս ավելացնելուն համաձայն եմ: Գուցե մի կերպ գլուխ բերենք: Հեղինակավոր կերպով համաձայն եմ: Ցես վերջացրի (Նստում է մի կողմ):

ԳԱՍՊԱՐ. (Առաջ գալով բեմ). Թույլ տվեք յերկու խոսք ել ես ասեմ: Ընկերներ, թեև ինձ շատերը յենթակուլակ են անվանում, իսկ յես վորպես հավատարիմ մեր թանկագին խորհրդային իշխանության, հայտնում եմ, հինգ տոկոս ավելացնելուն յես ել եմ համաձայն: Յել ավելի խոսել պետք չէ: Առաջարկում եմ պլանը ընդունել և ցրվել տները: Ուրա՜:

(Իջնում է ցած)

ԽԱՉԵՐԵՍ. Ցես ամբողջովին միանում եմ: Ցես վեր...

ԳԵՂԵՑԻԿ. Քեզ արդեն լսեցինք: Խոսքը պատկանում է յերրորդ բրիգադի բրիգադիր ընկեր Խաչիկին:

ԲՐԻԳԱԴԻՐ. Ընկերներ, դուք լսեցի՞ք, թե ինչ են առաջարկում ինձանից առաջ յերկու հռետորները: Նրանք ենպիսի սուսիկ-փուսիկներն են, վոր առանց մի խոսքի ընդունեցին ռայոնից ուղարկած պլանը: Իսկ մեր բրիգադան դեմ է:

ԶԱՅՆԵՐ. Վո՞նց թե. ինչու՞:

ԳԱՍՊԱՐ. (Մեկեն տեղից վեր կենալով). Ընկերներ, առաջարկում եմ պախարակել նրան. պլանը վիժեցնում է:

ԲՐԻԳԱԴԻՐ. Այո, ընկերներ, մենք դեմ ենք այդ ցանքսի պլանին: Նրա փոխարեն մենք առաջարկում ենք մեր հանդիպական պլանը: Ահա՛ (Հանում է գրպանից թուղթը): Առաջարկում ենք մեր ցանքսի պլանը լայնացնել 35 տոկոսով: (Բեմադրության ժամանակ կարելի յե նայսարա-

ռել տվյալ տեղի կոլտնտեսության պլանը): Ցանքսը ավարտել նշանակված ժամկետից առաջ ու առաջ: Ուժեղացնել մենատնտեսականներին կոլտնտեսություններ գրավելու հարցը:

(Ծափահարություններ, աղմուկ, աղաղակ)

ԽԱՉԵՐԵՍ. (Վեր կենալով): Դա ուղղակի խայտառակություն է: Վերևից ուղարկած պլանը փոխե՞լ, լայնացնել արդեն լայնացածը: Ցես չեմ թույլ տա, յես...

ԳԵՂԵՑԻԿ. (Քմծիծաղ). Դու վերջացրիր—գիտենք: Նստիր:

ՄԻ ԿԻՆ. ընկեր Գեղեցիկ, ինձ խոսք տուր:

ԳԵՂԵՑԻԿ. Խոսիր, Վարսենիկ:

ՄԻ ԿԻՆ. Մի ժամ չկա ռայոնից գալս: Գործով յեգա ռայկոլտնտմիություն: Այնտեղ նախագահը հարցրեց ինձ՝ «Ինչպե՞ս է գնում,—ասում է,—ձեզ մոտ ցանքսի պատրաստությունը: Գլուխ կբերե՞ք արդյոք քան հինգ տոկոս ավելացումը»: Իսկ այստեղ հանկարծ լսում եմ հինգ տոկոսի մասին: Եդ քանի տոկոսը հապա ո՞վ կերավ:

ԳԵՂԵՑԻԿ. (ուշադրությամբ նայելով պլանը): Եստեղ ախր եղպես է գրված... Սպասեք, սպասեք... կարծես թե քերված է, ուղղված...

ԽԱՉԵՐԵՍ. Բան ասացիր: Ո՞վ կարող եր կոնկրետ ուղղել:

ՎԱՐԴԵՐԵՍ. Հարցնում ես, ո՞վ: Ցես կպատասխանեմ: (Բեմ է բարձրանում, առանց շտապելու մոտենում է Խաչերեսին):

ԳԱՍՊԱՐ. Առաջարկում եմ վիճաբանությունների վերջ տալ:

ԳԵՂԵՑԻԿ. Պապի, խոսիր:

ՎԱՐԴԵՐԵՍ. Դու հարցնում ես, թե ո՞վ է ուղղել պլանը, հա՛ (ցույց է տալիս Գասպարին): Ահա թե ով:

ԳԱՍՊԱՐ. (կեղծ ներոսած, աշխատում է ծածկել իր շփոթությունը յեվ վախը): Դու ինչ իրավունքով ես ազնիվ մարդուն մատով ցույց տալիս: Սուտ-սուտ ասելու համար կարելի յե խիստ պատասխանատվության կանչել և ութը տարով քշել...

ՎԱՐԴԵՐԻՍ. Լավ, եկ մենք հետո կտեսնենք թե ութը տարին ում կտան: Դե, լսեք, ընկերներ, թե ինչպես յեղավ: Խաբելով ինձ վարչության գրասենյակից հեռացրին: Պառավդ, ասում է, քեզ է փնտրում: Իսկ Գասպարը, տեսնեմ, ինձանից ինչ վոր թուղթ է թաքցնում: Հատակին ձգեց ու ինքն էլ վրան նստեց: Դե, յես էլ պակաս խորամանկը չեմ: Գլխի ընկա, թե ինչումն է բանը: Դուրս յեկա, իբր թե գնացի պառավիս յետևից, համա յես եստեղ պատուհանի տակն էյի: Ներս նայեցի ու ինչ տեսնեմ՝ Գասպարը դանակով ինչ վոր թուղթ է քերում ու գրում, ինչ էր գրում— չիմացա: Իսկ հիմա խո պարզ է—ձեզ էլ, ինձ էլ:

ԳԵՂԵՑԻԿ. Հա, պարզ, մեզ համար էլ պարզ է: Յերկերեսանի օպորտունիստից ու զզվելի յենթակուլակից բացի վնասարարությունից ու ամեն տեսակ խայտառակությունից ուրիշ ինչ կարելի յե սպասել: Այդ հարցը, վորտեղ հարկավոր է, կքննեն: Իսկ մենք, ընկերներ, մեր գործը կանենք:

ԼՈՒԿԱՇ. Առաջարկում եմ հանդիպական պլանի քվեարկությանը անցնել, յեթե վոչ վոք դեմ չէ:

ԲՐԻԳԱԴԻՐ. Ի պատասխան վնասարարների՝ օպորտունիստի և յենթակուլակի մեր բրիգադն առաջարկում է յերկու տոկոս ևս ավելացնել հանդիպական պլանի վրա:

(Ծափահարություններ)

ԳԵՂԵՑԻԿ. Դնում եմ քվեարկության: Ո՞վ կողմնակից է հանդիպական պլանին—ձեռք բարձրացրեք: Միաձայն:

ԲՈԼՈՐԸ. (պարզ): Կեցցե յերրորդ բոլշևիկյան ցանքսը...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ГОС. ПУБЛ. БИБЛ-КА ՀՍԽՀ-ССР ИМ. А. МЯСНИКЯНА
№ 2163
1932

Ответственный редактор М. Гигоян
Технический редактор Г. М. Маркарян

Сд. в набор 15/II—1932 г.
Сд. в печать 18/II—1932 г.
Об'ем 7/8 печ. листа
Тираж 1500 экз.

Уполкрайлита № 1169. Газ.-кн. тип. СККПО. Статформат Б6 125Х176. Заказ № 867
Гор. Ростов на Дону. Знаков 32000

ՀՀ Ազգային գրադարան
NL0311370

9775

На армянском языке

Д. ДОЛЕВ и Ф. СЫСОЕВ

ВСТРЕЧНЫЙ

пьеса в 1 действ.

Перев. Азнаурьян

Из-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

ԳՐԱՊԱՇԵՍՏԸ՝ ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ,
ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)